

ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆ

**ԱՄԱՎԵՐՋԻ ԶԱՆԴԷՍ ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ՎԵՑ ԿՈՒՍԱԿՐՕՆ ԱԲԵՂԱՆԵՐՈՒ**

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ Հայ Համայնքը հրճուանքի ու հոգեկան դուշապանի պահեր ապրեցան 24 եւ 25 Յուլիս, Շաբաթ եւ Կիրակի օրերուն, երբ տեղի ունեցան Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Ամսվերջի Հանդէսն ու վեց շրջանաւարտ սարահազներու կուսակրօն արեղայ ձեռնադրութիւնը:

Հայ Եկեղեցիի եւ Հայ Ժողովուրդի անսակարկ ծառայութեան նըւիրուող վեց այս նորընծաներուն ձեռնադրութիւնը անգամի մը համար դարձեալ կու գայ սմբողջ Հայութեան ուշադրութիւնն ու ակնկալութիւնը սեւեռել Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Գպրեվանքին վրայ, որ մօտ մէկուուկէս զարու իր հարուստ կեանքին ընթացքին ազգին տուած է բազմահարիւր կրօնականներ, ըլլան անոնք իշխանաւորները մեր Եկեղեցիին, կամ պարզ աշխատողները այս ճառատութեան:

Բարձրահմուտ եկեղեցականներ կամ աշխարհական մտաւորականներ պարտաստելու այս սրբազան պարտականութիւնը Ս. Յակոբեանց Միաբանութեան պահանջած է բազում զոհողութիւններ, ըլլան անոնք նիւթական թէ բարոյական: Աշխարհը սասանեցնող երկու Մեծ Պատերազմներու ընթացքին իսկ, Ժառանգաւորաց Վարժարանը շարունակած է իր գոյութիւնը պահել շնորհիւ Միաբանութեան անյողջող կամքին և նպատակասլաց ուղղութեան: Հարկ կա՞ր շեշտելու հոս, թէ արտասահմանի Հայ դպրութիւններու կրօնական կեանքը կարելի կը դառնայ, վերջին յիսուն տարիներուն մասնաւանդ, շնորհիւ Երուսաղէմի Ժառանգաւորացէն իրենց հոգեկան եւ մտաւորական սնունդը ստացած կրօնականներու, որոնք Լուսաւորչի սուրբ հաւատքին հետ տարածած են ու կը տարածեն տակաւին Հայ դարաւոր մշակոյթի սէրն ու հրմայքն ալ:

Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի այդ անզնահատելի դերին խոր գիտակցութեամբ է որ Ս. Աթոռոյս Պատրիարք Ն. Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեանի հոգածութեամբ եւ հետամուտ հակողութեամբ կը կառուցուի Ալէքս եւ Մարի Մանուկեան Գպրեվանքի նոր շէնքը, որ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Վսեմ. Նախագահին հոյակապ նուիրատութեան շնորհիւ պիտի զմեռէ արդիական լաւագոյն պայմաններ, ուսման եւ դաստիարակութեան:

Ա Մ Ա Վ Ե Ր Զ Ի Հ Ա Ն Դ Է Ս

Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Ամսվերջի Հանդէսը տեղի ունեցաւ Ս. Աթոռոյս Գառուս Կիւլպէնկեան Մատենադարանի սրահին մէջ, Շաբաթ, 24 Յուլիս 1971, երեկոյեան ժամը 5-30ին, Ամենապատիւ Պատ-

րիարք Ս. Հօր նախագահութեամբ եւ ի ներկայութեան Ս. Յակոբեանց Միաբանութեան զերաշնորհ ու հոգեշնորհ հայրերու, ժառանգաւորաց եւ Տատուրեան սաներու, ինչպէս նաև իւրան բազմութեան մը:

« Հանդէսի սկիզբին, զեղեցկօրէն սօզուած յայտադիրներուն հետ ներկաներուն բաժնուեցաւ ժառանգաւորաց Վարժարանի ուսանողութեան «Նոր Սիոն» պարբերաթերթի առաջին թիւը, 48 մեծադիր էջերով:

Յոտնկայս երզուած «Սիրտ ի սիրտ» ժառանգաւորաց Վարժարանի քայլերդէն ետք, հանդիսութիւնը բացաւ Պրն. Արայ Գալայճեան, որ շէտեց երուսաղէմի Գարեվանքին կարեւորութիւնն ու ցարդ ունեցած զերը մեր Եկեղեցիի եւ Ժողովուրդի կեանքին մէջ:



Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը մրցանակ կը յանձնէ ժառանգաւոր սանի մը:

Կրօնական լուրջ եւ խորհրդաւոր մթնոլորտ մը ստեղծեց ժառանգաւոր սաներու կողմէ երզուած «Ուրախ Լեթ» շարականը, ղեկավարութեամբ Պրն. Սահակ Գալայճեանի, որմէ ետք բեմ բարձրացաւ շրջանաւարտ Բարեշնորհ Պօղոս Սարկաւազ Մանուկեան, երանաշնորհ Գարեղին Կաթողիկոս Յովսէփեանցի մասին բանաստօութիւն մը ընկելու: Մօտ տաս վայրկեան, Բարեշնորհ Սարկաւազը կտրուկ զիծերով ներկայացուց մեծ կրօնականին եւ սքանչելի հայրենասէրին կեանքն ու զործունէութիւնը, ծանրանալով մասնաւոր Յովսէփեանց Կաթողիկոսի ձգած գիտական-բանասիրական ժառանգութեան վրայ:

Օրուն խորհուրդին համապատասխան եւ կարծէք շրջանաւարտ սարկաւազներուն համար յատկապէս գրուած Ռ. Քիփլինկի «Եթէ...» շերթուածը հասկացողութեամբ արտասանեց ժառանգաւորաց սան Համբարձում Պալեան, որմէ ետք Քէթլըլլիի «Պարսկական Ետկայ» սերուն կտրը դաշնակի վրայ յաջողութեամբ նուազեց Տիրացու Ենովք Զէքիճեան:

- Երջանաւարտ Բարեշնորհ Սարգիս Սարկաւազ, Պարսամեան պատգ
 րատաւ իր բանախօսութիւն ժը «Հայ Եկեղեցին եւ Հայ Եկեղեցականը» պա
 տէհ նիւթին շուրջ, ուր, ընելէ ետք ամփոփ դնաւատականը տասնհինգ դաս
 բերու ընթացքին անոնց կատարած գերին, կը հաւատարիցնէր ներկաները թէ
 իրենց ձեռնադրութեամբ, իրենք վեց եղբայրներ, պիտի ջնային ընթանալ
 օրհնեալ նախիջներու ուզից ճամբէն, ի պարծանս Հայաստանեայց Ս. Եկե
 ղեցիին եւ Հայ Ժողովուրդին:

Իսնիէլ Վարուժանի «Ճան» քերթուածը արտասանեց ժառանգաւոր
 սան Գրիգոր Աֆարեան, եւ «Օրհնեցէք զՏէր» Ս. Աթոռյս շարականի երկ
 ղեցողութենէն ետք, Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Եպս - Աճէմեան բեմ հըր
 բաւիրեց Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայրը, եւ ներկայացուց 1970-71 ու
 սումնական շրջանի ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի տարեկան
 անդեկագիրը (որ կ'երեւի «Միտն»ի ներկայ թիւին մէջ):

Պատրիարք Ս. Հայրը շրջանաւարտութեան վկայականները յանձ
 նեց, ծափահարութիւններու ընդմէջէն, Ընծայարանի Երրորդ Կարգը ուսը
 տած վեց սաներուն, որոնք են -



Երբ ծնրադիր կը յառաջանան դէպի Աւագ Խորան:

Բարեշնորհ Վարդան Սարկաւազ Տատուրեան
 Բարեշնորհ Պօղոս Սարկաւազ Մանուկեան
 Բարեշնորհ Մանուկ Սարկաւազ Մուրատեան
 Բարեշնորհ Օննիկ Սարկաւազ Այբաղեան
 Բարեշնորհ Սարգիս Սարկաւազ Պարսամեան
 Բարեշնորհ Գարրիէլ Սարկաւազ Թաշճեան

Տեղեկագրի աւարտին, Պատրիարք Ս. Հայրը բաժնեց ուսմանց մէջ առաջնութիւն շահող աշակերտներու մրցանակները, եւ շատ տպաւորիչ այս հանդիսութիւնը աւարտեցաւ Ամենապատիւ Նախագահին օրհնութեամբ ։

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՎԵՑ ԿՈՒՍԱԿՐՕՆ ԱԲԵՂԱՆԵՐՈՒ

24 եւ 25 Յուլիս 1971, Եարաթ եւ Կիրակի օրերուն, ցնծութեան մէջ էր Սրբոց Յակոբեանց ամբողջ Միաբանութիւնը, որովհետեւ վեց երիտասարդ ու պատրաստուած շրջնաւարտները Ընծայարանին կու դային միանալու Սրբաաղիեաց պահապան միաբաններու շարքին, ուխտած ըլլալով նրաւորիք կուսակիցան քահանայութեան, ի պայծառութիւն Երուսաղէմի դարաւոր Հայ Պատրիարքութեան եւ ի շինութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցիին ։

ԿՈՉՈՒՄ ՆՈՐՇՆՄԱՆԵՐՈՒ

Եարաթ երեկոյ, Ս. Յակոբի Տաճարին մէջ կատարուեցաւ կոչման կարգը նորընծաներուն, նախագահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Ս. Հօր ։



Հրաժարում աշխարհէն ու աշխարհիկ կեանքէն ։

Ամենապատիւ Պատրիարքին՝ կոչեցեալներուն ուղղութեամբ «Օրհնեաց դձեպ Տէր ի Յիսնէ, աբնար բնակեալն է յերուսաղէմ օրհնութենէն ետք, խորտաւելակ Ս. Աթոռայ Հուարարայեա Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասրանեան վկայեց ընծայեալներու հոգեկան եւ մտաւոր բարեմասնութեանց մասին ի զմտոց բիծանիք նկատելով քահանայական ձեռնադրութեան ։

Արարողութեան աւարտին, վեց երիտասարդ ուխտադիրները արտասանեցին Ս. Գրիգոր Տաթեւացիի կողմէ սահմանուած Հայաստանեայց Ս. Եկեղեցիի դաւանանքը ։

ՉԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՌՐԸՆՄԱՆԵՐՈՒ

Վեց նորընծաներու ձեռնադրութիւնը կատարուեցաւ 25 Յուլիս 1971, Վարդապետք Կիրակոսի, ձեռամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր, որ մասնոյց նաեւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարազը: Պարտաւիակն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան, իսկ առընթերակայ էին Հոգշ. Տ. Տ. Սեւան եւ Ադան Արեղաները:

Առաջնորդակէ կաթ Ս. Պորանին առջեւ, ուր երգուեցան ձեռնադրութեան շարականներ, վեց նորընծաները ծնրազիր եւ առաջնորդութեամբ աւրիթերակայ Հոգեշնորհ Հայրերուն բարձրացան Ս. Պորան եւ, հաւատացեալ խուն թաղութեան փառնարով ու իրենց ձեռքերը բարձրացուցան, հրատարեցան աշխարհէն, կաշուելու համար զի քահանայութիւն Սուրբ Կիրակոսի:



Պատրիարք Ս. Հայրը կ'օծէ նախառնբը նորընծաներուն:

Ապա, երբ բոլորուած էին իրենց Հոգեւոր ծնողին, Ամեն. Պատրիարք Ս. Հօր շուրջ, այս վերջինը իր ձեռքերը խաչածնէ՝ դրաւ իւրաքանչիւր ընծայեալի վրասն եւ ազօթեց. «Ես դնեմ դձեռս ի վերայ սորա եւ դուք ամենեքեան ազօթս արարէք զի արժանի լինիցի ան պատիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեան Աստուծոյ»: Արդէն քիչ առաջ կ'պիրենբը միաձայնութեամբ եւ երիցս չարժանի են» ձայնած էին:

Յետոյ, «Ողջոյնքէն քիչ առաջ, նորընծաները ծնրադրեցին Ն. Ամենապատուութեան առջեւ, եւ յաջորդաբար քնդունեցին քահանայական սեւ փիւրնը, սաղաւարար, փորուարբը, շուրջառք եւ այլն: Ապա, քաշուած վարազոյրին ետին զգեատարուեցան, մինչ դպիրներ «Պորհուրք խորինը»

կ'երգէին, հաւատքի ու վերացման ամենէն սքանչելի պահ մը ստեղծելով խորհրդաւոր ճանաբին եւ ներկաներու սրտերուն մէջ:

ՕՍՈՒՄ ՆՈՐԸՆԾԱՆԵՐՈՒ

Կը հասնի ձեռնադրութեան ամբողջ պաշտօնին ամենէն պակուցիչ մասը, երբ Պատարագիչ Ամեն. Սրբազանը սրբալոյս միւռնոսով կ'օծէ իւրաքանչիւր նորընծայի մաքուր ճակատն ու ձեռքերը, եւ կը վերակոչէ զանոնք իրենց նոր անուններով, ըստ Եկեղեցւոյ զարաւոր սովորութեան: Այսպէս,

Վարդան Սրկ. Տատուրեան կը վերակոչուի Տ. Բաղուր Արեգայ Պօղոս Սրկ. Մանուկեան կը վերակոչուի Տ. Նուրիան Արեգայ Մանուկ Սրկ. Մուրատեան կը վերակոչուի Տ. Գիսակ Արեգայ Օննիկ Սրկ. Այբազեան կը վերակոչուի Տ. Վիգէն Արեգայ Սարգիս Սրկ. Պարսամեան կը վերակոչուի Տ. Խաժակ Արեգայ Գարբէլ Սրկ. Թաշեան կը վերակոչուի Տ. Մուշեղ Արեգայ



Երբ հաւատացեալներուն կը շնորհուի առաջին օրհնութիւնը:

Բիշ ետք, Պատրիարք Սրբազան Հօրմէն կը ստանան Սուրբ Սկիւճը, նշանակ Ս. Պատարագ մատուցանելու իշխանութեան, եւ զանալով հաւատացեալ բազմութեան, կու տան իրենց առաջին օրհնութիւնը, անդրանիկ խորհրդանիշը իրենց հովուական ապագայ կեանքին ու գործունէութեան:

«Ողջոյն»ի պահան, Պատարագիչ Սրբազան Հայրը կ'ողջագուրէ իր հոգեւոր զաւակները, մինչ իրեն կը հետեւին Ս. Յակոբեանց Միաբանութեան բոլոր անդամները, արտագեղ ու երջանիկ: Ս. Պատարագը աշնուհետեւ կը

չարունակուի անընդմէջ, եւ վերջաւորութեան, մինչ վեց նորընծաները դասին մէջ դուռած գրականներու վրայէն Աւետարանի Հատուածներ կը քաղեն, հաւատացեալներու բազմութիւնը կու գայ երկիւզածութեամբ ակահամբոյր կատարելու :

ՎԵՂԱՏՎԻ ՏՈՒՈՒԶՈՒԹԻՒՆ

Նոյն օր, երկիւյեան ժամերգութեան աւարտին, յառուկ աղօթքնեքէ եւ Ս. Գրոց ընթերցումներէ ետք, Ամենապատիւ Սրբազան Հայրը հանեց իւրաքանչիւր նորընծայի գլուխէն սարկաւազական ջրբունը (զգակ), զայն փոխարինելով կուսակրօն քահանայութեան խորհրդանիշ վեղարով : Արարողութեան աւարտին, նորընծաները, իրենց Հոգեւոր Հօր հետ, առաջնորդուեցան Պատրիարքարան :



Նորընծայ Արեղանները իրենց Հոգևոր Հօր՝ Ամեն. Պատրիարք Սրբազանին հետ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՒՄ

Իրիկունը, ժամը 6-30ին, Վանքի սեղանատան մէջ կատարուեցաւ Միաբանական ընթրիք մը, նախադահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Ս. Հօր եւ ի ներկայութեան Ս. Յակոբեանց Միաբանութեան, նորընծաներուն ու ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի ուսանողութեան : Բացման խօսքը կատարեց Դպրեմանքի Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեան, ապա նորընծաներուն կողմէ խօսք առաւ Հոգշ. Տ. Մուշեղ Արեղայ Թաշմեան : Իսկ ընթրիքը իր յորդորական եւ շնորհաւորական գեղեցիկ խօսքով փակեց Ամենապատիւ Ս. Հայրը, որ, «Օրհնեցէք զՏէր» Ս, Աթոռոյս շարականի երգեցողութենէն ետք, զրհնեց ներկաներն ու սեղանը :

Ազա, ինչ նորնձայ արեղաները իրենց մարտիչին, Հոգչ. Տ. Նա-
րեկ Արեղայ Մարֆազիյանի առաջնորդութեամբ մեկնեցան Բեթղեհէմի մեր
Վանքը, հոն անցրին լու Քառասորեայ իրենց առանձնութեան շրջանը:

«ՍԻՌՆ», ԱՅՍ ՈՒՐԱՆ ԱՌԻԹՈՎ, ՋԵՐՄԱԳԻՆՍ ԿՐ ԵՆՈՐԱՆՈՐԷ
ՆՈՐԱԾՈՎ ԿԵՑ ԱՐԵՎԱՆԵՐԸ, ԱՆՈՆՑ ԶԱՆԿԱՌՈՎ ԱՄԷՆ ԿԱՐԳԻ ՅՈՋԱՂՈՒԹԻՒՆ
ԻՐԵՆՑ ՍՈՒՐԲ ԱՍՊԱՐԷՅՈՆ ՄԷՋ:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Հոգչ. Բախուր Արդ. Տատուրեան

Ծնած է Հալէպ 1948ին, աւաղանի անունով Վարդան: Նախնական
կրթութիւնը ստացած է Հալէպի Հայկազեան Վարժարանին մէջ: 1962ին ա-
ւարտել է ետք հինգերորդ դասարանը, դիմած է եւ ընդունուած Ս. Աթոռոյս
ժառանգաւորաց Վարժարան: Անընդմէջ ուսանողութենէ մը ետք, սարկա-
ւազ ձեռնադրուած է 27 Յուլիս 1968ին, իսկ ներկայ տարեշրջանի Յունիս
15ին շրջանաւարտ եղած է Ընծայարանի երրորդ կարգէն:

Հոգչ. Նուրեան Արդ. Մանուկեան

Ծնած է Հալէպ 1948 Յուլիս 22ին: Աւաղանի անունով Պօղոս: Նախ-
նական ուսումը ստացած է Հալէպի Հայկազեան Վարժարանը, որուն հինգե-
րորդ դասարանը աւարտած է ետք 1961ին անցած է Կիլիկիոյ Կաթողիկոսու-
թեան Անթիլիասի Գպրեմիանքը: 1966ին դիմած է եւ ընդունուած Ս. Աթոռոյս
ժառանգաւորաց Վարժարան: Սարկաւազ ձեռնադրուած է 27 Յուլիս 1968ին,
իսկ ներկայ տարեշրջանի Յունիս 15ին շրջանաւարտ եղած, աւարտելով Ըն-
ծայարանի երրորդ կարգը:

Հոգչ. Գիսակ Արդ. Մուրատեան

Ծնած է Հալէպ 1951 Նոյեմբեր 6ին, աւաղանի անունով Մանուկ:
Նախնական ուսումը ստացած է Գամիչիի Ազգային Վարժարանին մէջ, ու-
րուն հինգերորդ դասարանը աւարտած է 1963ին: Նոյն տարին դիմած էւ ըն-
դունուած է Ս. Աթոռոյս ժառանգաւորաց Վարժարան: Սարկաւազ ձեռնա-
դրուած է 27 Յուլիս 1968ին, իսկ ներկայ տարեշրջանի Յունիս 15ին շրջանա-
ւարտ եղած, աւարտելով Ընծայարանի երրորդ կարգը:

Հոգչ. Վիգէն Արդ. Այֆազեան

Ծնած է Սղերդի Ծիրնաք գիւղը 1950 Յունուար 21ին, աւաղանի ա-
նունով Օննիկ: Նախնական կրթութիւնը տեղւոյն վրայ ստանալէ ետք Պոլիս
եկած է եւ յաճարած Ս. Քաշ Գպրեմիանք, որուն միջնակարգ շրջանը աւար-
տած է յաջողութեամբ: 1967 Հոկտեմբերին եկած է Երուսաղէմ եւ եղած Ըն-
ծայարանի առաջին կարգի ուսանող: Սարկաւազ ձեռնադրուած է 27 Յուլիս
1968ին, իսկ ներկայ տարեշրջանի Յունիս 15ին շրջանաւարտ եղած:

Հոգշ. Խաժակ Արզ. Պարսամբան

Ծնած է Արարիկի 9 Յունիս 1951ին, աւագանի անունով Սարգիս: Քիչ ետք ծնողքին հետ բնակութիւն հաստատած է Պոլիս, ուր իր նախնական ուսումը ստացած է Սուրբ Մեթողիան Վարժարանին մէջ: Ապա հետեւած է Ս. Խաչ Դպրեմանքի դասընթացքներուն եւ դպրութեան աստիճան ստացած 1967ին: Նոյն տարեշրջանի Հոկտեմբերին դիմած է եւ ընդունուած Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարան: Սարկաւազ ձեռնադրուած է 27 Յունիս 1968ին, իսկ շրջանաւարտ եղած ներկայ տարւոյ Յունիս 15ին:

Հոգշ. Մուշեղ Արզ. Թաշնեան

Ծնած է Պէյրութ 1947ին, աւագանի անունով Գաբրիէլ: Իր ուսումը ստացած է նախ Ս. Քառասնից Մանկանց Վարժարանը եւ ապա Կենաց Վարժարանը: 1960ին եկած է Երուսաղէմ, ուր աշակերտած է մինչեւ 1965, երբ անձնական պատճառներով վերադարձած է Պէյրութ: 1970ին վերստին ընդունուելով, սարկաւազ ձեռնադրուած է 1970 Սեպտեմբերին, իսկ ներկայ տարեշրջանի Յունիս 15ին շրջանաւարտ եղած է Ընծայարանի բաժնէն:

